the commemoration events in the months (March 8, April 24, November 7) and years following Sumgait, associated the Sumgait tragedy with and "merged" it into the topic of the 1915 Genocide. Second, Sumgait was made part of the "international memory," being juxtaposed, for example, with the crimes of the World War II or with the mass repressions in the Stalinist era.

In the next chapter of the book we learn about the specific issue of emotional banners spontaneously produced in Yerevan after the Sumgait events. These banners, reflecting people's grief, sorrow and suffering, the author argues, are analogous to the medieval and post-Genocide Armenian literature devoted to the tragic events in the course of the Armenian history. Especially interesting is the examination of the banners containing quotations from the Armenian poets Sevak and Siamanto, as well as the analysis of how the authors of the banners made connections between the events at the beginning and at the end of the twentieth century and transferred their feeling of grief to the banners by using the medium of the poetry.

The fifth chapter is essential for gaining insight into several important transformations taking place in the collective identity of Armenian society at those tumultuous times. First, Marutyan argues that the Karabagh Movement brought with itself an understanding of constitutional rights of the people, who, at first, viewed "Perestroika" and "Glasnost" as opportunities for realization of their aspirations. Second, the year 1988 also marked disillusionment with these democratic processes because of the Kremlin's manipulations over the Karabagh issue as well as the policy of covering up the realities of the Sumgait pogroms. This can be well seen on the posters and banners of the period, which carried a strong criticism of central Soviet mass propaganda institutions, demanded political evaluation of crimes and blamed Moscow for the Sumgait events. Finally, we learn that the banners and posters reflected another reality of Armenian society, namely, the transformation in the collective perceptions of the idealistic image of the Russian people and the Russian soldier as the saviors of the Armenians, a fundamental change which was caused by the involvement of the Soviet armed forces in the suppression of the Karabagh Movement.

The sixth chapter investigates another essential change in the collective identity of the Armenian society. Comparison of the materials marking the start and the closing phase of the Karabagh Movement reveals an important shift in the nature of the national self-concept. More specifically, Marutyan's analysis demonstrates that if the texts in the Genocide-related banners from the year 1988 mostly contained pleading tones (restoration of justice, recognition of the Genocide, and so on), the banners of the following years emphasized the necessity for self-reliance and armed struggle, as well as for the restoration of independence.

The banners of that period also became the pioneers of historical revisionism with regards to the events related to the cooperation of Russia and Turkey at the beginning of the twentieth century. Presenting this cooperation as fatal for the Armenian people, the banners – introduced mainly by the members of the Union for National Self-Determination – Marutyan writes, came as a big surprise not only for representatives of the Armenian historiography but also for society in general.

Finally, the last chapter of the book stands out in interpreting how the banners reflected the ecological concerns raised at that time. It demonstrates the ways the ecological problems were equated to the topic of the Genocide, hence given more weight (for example, the Metzamor nuclear plant and the "Nairit" chemical factory were presented as agents of perpetuation of the 1915 Genocide). Furthermore, the chapter may be interesting for the reader – especially in the light of the present debates taking place in Armenia – in its presentation of the banners expressing the concerns over the diminished role of the Armenian language. The book concludes with a convincing summary that, among other things, re-emphasizes the thesis of a fundamental identity change that took place during the Karabagh Movement, resulting in a transition from the perception of victim to that of a fighting and victorious nation.

In addition to the main text, the author provides an accurate index, bibliography, brief

chronology of the Karabagh Movement, and the end notes clarify and extend the points made in the text. The book's general format (layout, binding, typography, etc.) makes its reading enjoyable, while the high quality of illustrations provides important visual support to the text.

Tigran Matosyan

Ռուբէն Սաֆրաստեան. *Օսմանեան կայսրութիւն. ցեղասպանութեան ծրագրի ծագումնաբանութիւնը (1876-1920 թթ.).* Երեւան, 2009, Լուսակն հրատ., 248 էջ:

Պատմական գիտութեան տեսական մասնաճիւղերից մէկը՝ ցեղասպանութեան եւ զանգուածային բռնութիւնների երեւոյթն ուսումնասիրող ցեղասպանագիտութիւնը, որը շուրջ չորս տասնամեակի պատմութիւն ունի, մեր օրերում հասել է նշանակալից բարձունքների: Հայրենական պատմագիտական իրականութեան մէջ գիտութեան այս խրթին մասնաճիւղով հետաքրքրւում են, ցաւօք, սակաւաթիւ ուսումնասիրողներ: ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր Ռուբէն Սաֆրաստեանի մենագրութիւնը հայրենական պատմագիտութեան մէջ առաջին լուրջ ներդրումն է ցեղասպանագիտութեան որոշ հիմնահարցերի ուսումնասիրութեան բնագաւառում:

Վեց գլխից բաղկացած սոյն մենագրութեան մէջ մեր հանրապետութեան սահմաններից դուրս քաջ յայտնի թուրքագէտ Ռ. Սաֆրաստեանը հրապարակել է տեսական մի ուսումնասիրութիւն, որում, ի շարս տարբեր հիմնախնդիրների, հարուստ աղբիւրագիտական յենքի վրայ (այլալեզու տպագիր սկզբնաղբիւրներից բացի, հեղինակն օգտագործել է նաեւ հայրենական եւ ռուսական կենտրոնական արխիւներից քաղուած հարուստ նիւթեր) քննարկւում են գլխաւորապէս ցեղասպանութեան գաղափարի հասունացման, դրա նախադրեալների եւ ծրագրերի մշակման հետ կապուած որոշ առանձնայատկութիւններ՝ Օսմանեան կայսրութեան պատմական փորձի վերլուծութեան հիման վրայ: Գրքի վերնագրից իսկ պարզ է դառնում, որ հեղինակի խնդիրն ամենեւին Հայոց ցեղասպանութեան քաղաքական պատմութեան ուսումնասիրութիւնը եւ կամ դրա փաստի հիմնաւորումը չէ, ինչն, ի դէպ, նման անհրաժեշտութիւն ամենեւին չունի: Նա հետապնդում է բոլորովին այլ՝ Օսմանեան կայսրութեան տարածքում բռնութեամբ ընդգրկուած քրիստոնեայ հպատակների, մասնաւորապէս՝ բուլղարացիների եւ հայերի նկատմամբ իրականացուած ցեղասպան քաղաքականութեան յենքի վրայ ցեղասպանութեանն՝ իբրեւ երեւոյթին առնչուող մեխանիզմների առաջացման, բացայայտման եւ վերլուծութեան նպատակ:

Ռ. Սաֆրաստեանի աշխատութեան արժանիքներից նշենք նախ Օսմանեան կայսրութեան եւ բուլղարացիների ու հայերի նկատմամբ օսմանեան պետութեան վարած քաղաքականութեան պատմութեան հիմնախնդիրների քննարկումը միանգամայն նոր՝ համեմատական ցեղասպանագիտութեան նուաճումների տեսանկիւնից: Կանգ առնենք ցեղասպանագէտների շրջանում բուռն բանավէճերի տեղիք տուած հայեցակարգային դրոյթներից ամենանշանակի՝ ցեղասպանութեան, իբրեւ երեւոյթի, սահմանման կնճռոտ խնդրում հեղինակի դիրքորոշման վրայ: Ռ. Սաֆրաստեանն իր նախորդներից համակարծիք է նրանց հետ (Ի. Լ. Հորոուից, Ֆ. Զոլք եւ այլք), որոնք ցեղասպանութիւն են համարում էթնիկական ընդհանրութիւնների՝ միայն պետական քաղաքակարութիւնների մակարդակով եւ կանխամտածուածութեան հիման վրայ իրականացուած բնաջնջումները: Մեր կողմից եւս ընդունելի այս իրատեսական հայեցակարգային յենքի վրայ են խարսխւում նրա՝ օսմանեան տարբեր վարչակարգերի մտայղացած՝ հպատակեցուած քրիստոնեայ ժողովուրդների, այդ թւում՝ հայերի բնաջնջման ծրագրերի քննարկումն ու համոզիչ եզրակացութիւնները:

Ի սկզբանէ մանրամասնենք ցեղասպանագիտութեան բնագաւառում հեղինակի ամենակարեւոր ներդրումը. քննարկելով կոտորածի, նախացեղասպանութեան եւ ցեղասպանութեան հիմնական տարբերութիւնները, որոնք պայմանաւորում է պետական քաղաքականութեան բացակայութեամբ կամ առկայութեամբ, նա առաջադրում է «նախացեղասպանութիւն» եզ-

enjoyable, while the high quality of illustrations provides important visual support to the text.

Tigran Matosyan

ըոյթի իր մեկնաբանութիւնը, որը ենթադրում է «ցեղասպանութիւն իրագործելու դիտաւորութեան (intent, intention) առկայութիւնը եւ այն իրագործելու նպատակով գործողութիւնների բացակայութիւնը» (էջ 40): Ցեղասպանութեան, իբրեւ երեւոյթի, սահմանման խնդրում իրաւացիօրէն առաջնային նշանակութիւն յատկացնելով նաեւ դիտաւորութեան հանգամանքին՝ Ռ. Սաֆրաստեանը վերջինիս դրսեւորման միջոց է համարում ցեղասպանութեան ծրագրի գոյութեան իսկ փաստը այն պարագայում, երբ նոյնիսկ դա ամրագրուած չէ ծրագրային փաստաթղթերում: Ուստի՝ նա առաջադրում է «նախացեղասպանական իրավիճակ» հասկացութիւնը, որի պայմաններում թէեւ արդէն առկայ ցեղասպանութեան ծրագիրը դեռեւս վերջնականապէս չի ձեւակերպուել եւ չեն ընտրուել դրա իրականացման միջոցները, այնուամենայնիւ, այն ի վիճակի է վերաճելու «լայնածաւալ ցեղասպանական իրադրութեան»: Այս առնչութեամբ հեղինակը յանգում է հետաքրքիր հետեւութեան. «Նախացեղասպանական իրավիճակի պայմաններում ցեղասպանութիւնը հանդէս է գալիս որպէս քաղաքական խնդիրներ լուծելու հնարաւորութիւններից մէկը, բայց ոչ միակը» (էջ 43):

Ռ. Սաֆրաստեանն այս հիմնական տեսական դրոյթներից ելնելով է քննական վերլուծութեան ենթարկում Օսմանեան վարչակարգերի՝ քրիստոնեաների նկատմամբ կիրառած քաղաքականութեան եւ նրանց զանգուածային բնաջնջումների համայնապատկերը շուրջ հարիւր տարուայ կտրուածքով (1820-1920 թթ.): Անդրադառնալով տարբեր քրիստոնեայ ժողովուրդների հանդէպ իրականացուած ցեղասպան քաղաքականութեան նախադրեալներին՝ հեղինակն Օսմանեան կայսրութիւնում 1820-ական թուականներից ի վեր բարենորոգումների իրականացմանը միտուած նկատելի տեղաշարժերը շաղկապում է այնպիսի էական հանգամանքների հետ, ինչպիսիք են Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման անհրաժեշտութիւնը եւ տարբեր ժողովուրդների մօտ նշմարուող ապստամբական եւ անջատողական միտումների կանխարգելումը: Նա մանրամասնօրէն ուսումնասիրում է «Թանզիմաթ» անուամբ յայտնի բարենորոգումների ժամանակաշրջանի երկու հիմնական փուլերի (համապատասխանաբար՝ ԺԹ. դ. 30-50-ական եւ 50-70-ական թուականներ) առանձնայատկութիւնները եւ բարենորոգումների իրականացմանը միտուած ծրագրերի մշակման ընթացքում օսմանեան տարբեր քաղաքական շրջանակներն ալեկոծած տարակարծութիւնների ուսումնասիրութեան յենքի վրայ ներկայացնում է օսմանիզմի գաղափարախօսութեան հասունացման գործընթացը:

Քրիստոնեայ հպատակների կացութեան կարծեցեալ բարելաւման նպատակ հետապնդող բարենորոգումների շրջանակում ընդունուած իրաւաբանական տարբեր փաստաթղթերի (1839 թ. Գիւլհանէի հրովարտակի, 1840 թ. քրէական օրէնքի) համադրման միջոցով, հեղինակը, չնայած դրանցում ամրագրուած յօդուածները բնորոշում է իբրեւ դատարկ խոստումներ եւ փաստացի ապացուցում, որ Բարձր Դուռը «ռայաների» նկատմամբ շարունակում էր վարել «ճնշման եւ հալածանքի աւանդական» մեթոդները, այդուհանդերձ, փաստում է, որ «նոր գաղափարները աստիճանաբար ճանապարհ էին հարթում» (էջ 53):

Այդ մասին է վկայում Ռ. Սաֆրաստեանի ուշադրութեանն արժանացած Թանզիմաթի երկրորդ փուլի ընթացքում Ալի եւ Ֆուատ փաշաների՝ կայսրութեան բոլոր ժողովուրդների «միախառնման» եւ «միաձուլման» մշակած հայեցակարգը: Հեղինակը մատնանշում է դրա իրականացմանն ուղղուած նրանց նախանշած ուղիները (սկսած բոլոր ժողովուրդների միասնական դաստիարակութեան եւ կրթութեան անհրաժեշտութիւնից մինչեւ քրիստոնեաներին զօրակոչելու թոյլտուութեան ընձեռումը), բացայայտում նոր մօտեցումները (ոչ մահմեդականներին՝ սուլթանին եւ «օսմանեան հայրենիքին» հաւատարմութեան ոգով դաստիարակելու անհրաժեշտութիւնը), քննարկում է օրէնսդրական փաստաթղթերը՝ քրիստոնեաներին զինակոչելու վերաբերեալ սուլթանի 1855 թ. չկենսագործուած իրադէն, 1869 թ. օսմանահպատակութեան վերաբերեալ օրէնքը, որի իմաստը, ըստ նրա մեկնաբանութեան, յանգում էր սոսկ ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնութիւնից զրկելուն: Ընդհանուր առմամբ, նա բարենորոգիչների նախաձեռնած քայլերը բնորոշում է իբրեւ քրիստոնեայ ժողովուրդների ուծացման փորձ (էջ 71): Հեղինակը մանրակրկիտ վերլուծում է նաեւ բարենորոգումների հակառակորդների՝ «նոր օսմանցիներ»

անուամբ յայտնի ընդդիմադիր սահմանադրականների հայեցքները, նրանց որդեգրած «օսմանեան ազգ» եւ «օսմանեան հայրենասիրութիւն» գաղափարական ու քաղաքական հայեցակարգերը եւ հաւաստում, որ դրանք, ըստ էութեան, հետապնդում էին կայսրութեան բնակչութեան թուրքացման նպատակ, ինչն իր արտացոլումն է գտել 1876 թ. օսմանեան սահմանադրութեան մէջ (էջ 91):

Ռ. Սաֆրաստեանի մենագրութեան առանցքային հիմնախնդիրներից է ԺԹ. դարի 70-ական թուականներին Օսմանեան կայսրութեան թուականներին Օսմանեան կայսրութիւնում նախացեղասպանական իրավիճակի ձեւաւորումը, որը քննարկուած է համակողմանիօրէն: Համառօտակի անդրադառնալով կայսրութեան ծագումնաբանութեանը եւ զարգացման առանձնայատկութիւններին՝ նա մեծ տեղ է յատկացնում թուրքերին ի սկզբանէ բնորոշ եւ բացայայտօրէն ընդգծուած հակաքրիստոնէական հաւաքական մտածողութեանը, որը ձեւաւորուել էր վաղ միջնադարից սկսած, ռազմաւորուել էր վաղ միջնադարից սկսած, ռազմատենչ եւ կրօնական մոլեռանդութեան պայմաններում, իսկ շատ աւելի ցցուն դրսեւորուել բարենորոգումների ժամանակաշրջանում:

Վկայակոչելով դեռեւս ԺԶ. դ. սկզբում այլազգիների հանդէպ օսմանեան գահակալներին միանգամայն բնորոշ այլատեցութեան փաստեր (նախօրօք կազմակերպուած զանգուածային բնաջնջումներ, բռնի տեղահանութիւններ), մատնանշելով դրանց իրականացումը կանխամտածուածութեան հիման վրայ՝ Ռ. Սաֆրաստեանն, ըստ իր՝ վերը նշուած հայեցակարգի, դրանք իրաւամբ բնութագրում է որպէս ցեղասպան քաղաքականութեան դրսեւորում (էջ 114, 115). «Ցեղասպանութիւնը քաղաքականութիւնը Օսմանեան կայսրութիւնում ունէր խորը պատմական ակունքներ՝ ինչպէս բովանդակութեան, այնպէս էլ ձեւի տեսակէտից»,– նշում է նա (էջ 116): Գրքի առաջին գլխում հեղինակն անդրադառնում է Ի. Լ. Հորոուիցի առաջադրած «ցեղասպան հասարակութիւն» հասկացութեանը (էջ 32)[1], որով, որքան տարօրինակ է, չի բնորոշում միջնադարեան օսմանեան հասարակութիւնը, թէեւ միաժամանակ աներկբայօրէն ապացուցում է նման հասարակութեան գոյութիւնն Օսմանեան կայսրութիւնում դարեր ի վեր:

Ինչ վերաբերում է 1876 թ. Օսմանեան կայսրութիւնում նախացեղասպանական իրավիճակի առաջացմանը, ապա դրան, հեղինակի համոզմամբ, մեծապէս նպաստել է թուրքերի մօտ արմատացած հակաքրիստոնէական տրամադրութիւնների աճը: Այս առումով յատկանշական է, որ առաջին անգամ օգտագործելով հայկական մամուլի հարուստ նիւթը, Ռ. Սաֆրաստեանը հիմնաւորում է 1859 թ. սուլթան Աբդուլ Մէջիդի դէմ կազմակերպուած «Քուլեալիի» դաւադրութեան մասնակիցների հակաթանզիմաթական եւ հակաքրիստոնէական դիրքորոշումը (էջ 129):

Հեղինակի հիմնական նպատակներից է 1870-ական թուականներից մինչեւ 1920-ական թուականներն օսմանեան վարչակարգերի ընդունած ցեղասպանութեան ծրագրերի վերլուծութիւնը, որոնց թիրախն օսմանահպատակ հայերն էին: Ռ. Սաֆրաստեանը եւ հայերն էին: Ռ. Սաֆրաստեանը եւ բուլղարացիները տեսնն այս ասպարէզում ունի մեծ ներդրում, դիր առաջինն է ապացուցել, որ նման ծրագրի առաջինն է ապացուցել, որ նման ծրագրի առաջին անգամ օսմանեան պետութիւնը, ի պատասխան 1876 թ. բուլղարացիների ապրելեան ապստամբութեան, մշակել է դեռեւս 1876 թ., եւ որը թէեւ չի իրականացուել, այդուհանդերձ, նպատակաուղղուած է եղել բուլղար ժողովրդի ոչնչացմանը: Ռուսական արխիւներում յայտնաբերուած փաստաթղթերի, մասնաւորապէս՝ Բուլղարիայում հաւատարմագրուած ռուս դիւանագէտների զեկուցագրերի մանրակրկիտ ուսումնասիրութեան հիման վրայ, նրան յաջողուել է յայտնաբերել ոչ միայն 1876 թ. մայիսին օսմանեան կառավարութեան կողմից ընդունուած՝ բուլղարացիներին ցեղասպանութեան ենթարկելու ծրագրին վերաբերող հաւաստի վկայութիւններ, այլեւ բացայայտել

---

1 Ի. Լ. Հորոուիցն իրաւամբ նշում է. «Ցեղասպան հասարակութիւնը տիրապետութեան միակ ձեւն է, որը մարդկանց պարբերաբար զրկում է կեանքից». տե՛ս **I. L. Horowitz**, *Taking Lives. Genocide and State Power*. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 154. Ի. Տերնոնն, անդրադառնալով այս հարցին, պարզաբանում է. «Ցեղասպան հասարակութիւններ են, որոնց մէջ պետութիւնն անխոչընդոտ տնօրինում է իր քաղաքացիների կեանքը. տե՛ս **Y. Ternon**, *L'État criminel. Les génocides au XXe siècle*, Paris, 1995, p. 72.

դրա առանձնայատկութիւնները, ինչը նրան հիմք է տուել եզրակացնելու, որ ծրագրում նախանշուած «գործողութիւնների ընդհանրութիւնը բացայայտում է պետութեան դիտաւորութիւնը՝ բնաջնջել որոշակի էթնիկական խումբ եւ կարող է բնութագրուել որպէս ցեղասպանութիւն: Քանի որ, նրա նպատակն է բնաջնջել այդ խումբը իր հայրենիքի տարածքի վրայ, ապա այն կարելի է դիտարկել որպէս հայրենազրկման նպատակով իրականացուելիք ցեղասպանութիւն» (էջ 161-162): Միաժամանակ, քննարկելով 1870-ական թուականներին Օսմանեան կայսրութիւնում ստեղծուած ճգնաժամային իրավիճակը, հեղինակը, յղելով բազմաբնոյթ սկզբնաղբիւրներ (ռուսական արխիւային վաւերագրերից բացի նաեւ հայկական մամուլի նիւթեր), յանգում է հետաքրքիր հետեւութեան. ըստ նրա՝ 1876 թ. վերջերին օսմանեան իշխանութիւնները «պատրաստւում էին կազմակերպել լայնածաւալ կոտորած նաեւ հայ ժողովրդի դէմ» (էջ 163):

Հիմնուելով ցեղասպանութեան, իբրեւ եբրեւոյթի, իր հայեցակարգի վրայ՝ Ռ. Սաֆրաստեանը Հայոց ցեղասպանութիւնն իրաւամբ դիտում է իբրեւ օսմանեան երեք վարչակարգերի կողմից իրականացուած, շուրջ երեք տասնամեակ յարատեւած գործընթաց: Չնայած պաշտօնական փաստաթղթերի բացկայութեանը՝ նա, այդուհանդերձ, համոզմունք է յայտնում, որ «առաջին հակահայկական ցեղասպանական բնոյթի ծրագիրը» կեանքի է կոչուել դեռեւս 1890-ական թուականներին (էջ 167-168): Ցաւօք, հայեցակարգային իրատեսական այս մօտեցումը նա հիմնաւորում է սոսկ սակաւաթիւ վկայութիւններով (էջ 167)՝ անտեսելով արեւմտեան դիւանագէտների մեծաքանակ զեկուցագրերը, որոնք անառարկելիօրէն փաստում են հայկական կոտորածների իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով եւ դիտաւորութեան հիման վրայ[2]:

Փոխարէնը, Ռ. Սաֆրաստեանը մանրամասնութեամբ քննարկում է 1915 թ. երիտթուրքերի ընդունած՝ հայ ժողովրդի համատարած բնաջնջման նպատակ հետապնդող՝ մեզ հասած վաւերագրերը, յունուարին երիտթուրքերի պարագլուխների գաղտնի խորհրդակցութիւնում ընդունուած «10 պատուիրաններ» փաստաթուղթը, որը նախանշում էր հայ ժողովրդի բնաջնջման եղանակները եւ միջոցները (զինուած ուժերի եւ թուրք ժողովրդի միջոցով հայերի ոչնչացում, տեղահանում եւ այլն), տեղահանութեանն առնչուող՝ «Նախարարների խորհրդի քննարկումների վերաբերեալ արձանագրութիւնը» եւ «Տեղահանութեան օրէնքը»: Հեղինակը փաստում է 1915 թ. առաջին կէսին Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ՝ օրէնքի տեսք ստացած միասնական եւ համակարգուած ծրագրային փաստաթղթի գոյութիւնը (էջ 172, 189): Ըստ այդմ՝ Ռ. Սաֆրաստեանն ապացուցում է նաեւ 1915 թ. հայ ժողովրդի բնաջնջման կազմակերպումը պետական քաղաքականութեան եւ կանխամտածուածութեան հիման վրայ:

Ելնելով Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի իր հայեցակարգից՝ հեղինակն առաջին անգամ ուշադրութիւն է հրաւիրում, ըստ թուրքական սկզբնաղբիւրների, քեմալականների հայաջինջ քաղաքականութեանն առնչուող փաստաթղթերի վրայ, վերլուծում, մասնաւորապէս, 1920 թ. նոյեմբերի 8-ին արտաքին գործերի նախարարի պաշտօնակատար Մուհթար բէյի ծածկագիրն Արեւելեան ռազմաճակատի հրամանատար Քեազըմ Քարաբէքիր փաշային, որը պարզորոշ բացայայտում է ոչ միայն հայ ժողովրդի ցեղասպանութիւնը շարունակելու, այլեւ Հայաստանը, որպէս պետութիւն, վերացնելու քեմալական Թուրքիայի մտադրութիւնը (էջ 191-194): Հայեացք նետելով քեմալականների ծրագրերի հեռահար նպատակների ձախողման վրայ՝ հեղինակը յանգում է կարեւոր եւ այժմէական հետեւութեան. Հայաստանի ընդգրկումը Խորհրդային կայսրութեան կազմում «հնարաւորութիւն տուեց հայ ժողովրդի մէկ հատուածին փրկուելու ֆիզիկական բնաջնջումից» (էջ 202):

Նշենք նաեւ, որ հեղինակի շարադրանքում երբեմն նկատւում են որոշ կրկնութիւններ, որոնցից նախընտրելի կը լինէր խուսափել:

2 Տե՛ս օրինակ *Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897*, Paris, 1897; *Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896*, Paris, 1897; **G. Meyrier**, *Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France 1894-1896.* Présentée et annotée par C. Mouradian et M. Durand-Meyrier, Paris, 2000.

Ռ. Սաֆրաստեանի մենագրութիւնը հետաքրքիր, խորհրդածութիւնների տեղիք տուող, բովանդակալից ուսումնասիրութիւն է, որը հարստացնում է մեր գիտելիքները Հայոց ցեղասպանութեան իրականացմանն առնչուող ծրագրային փաստաթղթերի, Օսմանեան կայսրութեան պատմութեան նուազ յայտնի կողմերի շուրջ, ինչպէս նաեւ ընդլայնում մեր պատկերացումները ցեղասպանագիտութեան ասպարէզում: Անտարակոյս, այն իր ուրոյն տեղը պարէզում: Անտարակոյս, այն իր ուրոյն տեղը գտնի ոչ միայն հայրենական պատմագիտութեան մէջ, այլեւ ցեղասպանագիտական ուսումնասիրութիւնների շարքում:

Վարուժան Պողոսեան

Գրիգոր Արշակեան, *Թուրքիայի քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում 1991-2001 թթ.*, Երեւան, ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2009, 212 էջ

Հայաստանում թուրքագիտութեան բաւականին ամուր հիմքեր ունենալու հետ մէկտեղ, ցաւօք սրտի, ժամանակակից Թուրքիան դեռեւս վատ է ուսումնասիրուած: Պատճառն արդարացուած է. Հայոց ցեղասպանութիւնն այնքան խոր վէրք է հասցրել հայ ժողովրդին, որ պատմագիտութեան, մասնաւորապէս՝ թուրքագիտութեան զարգացումը հիմնականում կենտրոնացել է Ի. դարի առաջին կէսի ու դրան նախորդող ժամանակահատուածի ուսումնասիրման վրայ: Դրանից բացի, հայ թուրքագիտութեան առջեւ դրուած չէին պետութեան կարիքները բաւարարելու նպատակներ, ուստի չկար անհրաժեշտութիւն ուսումնասիրելու հարեւան Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները. շեշտը դրւում էր դասական արեւելագիտութեան վրայ:

Անկախ Հայաստանն ու ինքնուրոյն քաղաքականութիւնը թելադրում են իրենց պահանջմունքները գիտութեան բոլոր ճիւղերին: Հայաստանի Հանրապետութեան ակտիւացող արտաքին քաղաքականութեանն արդէն, իհարկէ, անհրաժեշտ են աշխատանքներ, որոնք կ'ուսումնասիրեն հարեւան երկրներն ու որակեալ վերլուծութեամբ կ'ապահովեն որոշում կայացնողներին:

Թուրքիայի հանդէպ հայ հասարակութեան գիտելիքները սահմանափակւում են կարծրատիպային մակարդակով: Յարաբերութիւնների երկար տարիների բացակայութիւնն իր բացասական ազդեցութիւնն է ունեցել փոխադարձ ընկալման վրայ: Այսօր կարելի է վստահաբար ասել, որ հայ հասարակութիւնը չի ճանաչում Թուրքիան եւ, հետեւաբար, չի կարող կանխատեսել Անկարայի քայլերը: Մեզ համար Թուրքիայի արտաքին քաղաքականութիւնը մնացել է դեռ նախորդ դարի առաջին քառորդում: Իրականում այդ երկիրը դինամիկ զարգանում է եւ իր առաջնայնութիւններին հասնելու համար տարբեր մարտավարութիւններ է իրագործում:

Այս առումով Գրիգոր Արշակեանի «Թուրքիայի քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում, 1991-2001 թթ.» մենագրութիւնն իր ուրոյն տեղն ունի հայ ժամանակակից Թուրքագիտութեան մէջ: Մենագրութեամբ հեղինակը փորձ է անում ներկայացնել ընթերցողին Անկարայի ռազմավարութեան իրականացումը մեր տարածաշրջանում:

1991-2001 թթ. ժամանակահատուածը Թուրքիայի արտաքին քաղաքականութեան համար նոր ուղիների որոնման տարիներ էին: Անկարան, որպէս ՆԱՏՕ-ի հակախորհրդային սահմանապահ, ԽՍՀՄ փլուզումից յետոյ սպառեց իր դերակատարումը եւ կարիք ունէր նորովի ներկայացնել ու հիմնաւորել Թուրքիայի կարեւորութիւնը Արեւմուտքի համար: Ետխորհրդային տարածաշրջանում Անկարան փորձ կատարեց զբաղեցնել Ռուսաստանի դիրքերը՝ հիմնականում շեշտադրելով պանթուրքականութեան գաղափարախօսութիւնն ու համագործակցութիւնը թիւրքալեզու հանրապետութիւնների հետ: Գրիգոր Արշակեանի ուսումնասիրած ժամանակաշրջանում Հարաւային Կովկասում Թուրքիայի արտաքին քաղաքականութեան ակտիւութեան համար կային հանգուցային մի շարք գործօններ, որոնք մեծապէս ազդում էին ընթացքի վրայ: Դրանցից կարելի է յիշատակել հայ-ադրբեջանական հակամարտութիւնը, որը Անկարայի ադրբեջանամէտ, կողմնակալ դիրքորոշման արդիւնքում լրջապէս սահմանափակեց Թուրքիայի ազդե-